

ՏԱՍՆԵՐՈՐԻ ՏԱՐԻ

ՄԵԼԿ

Տարեկան գինը 10 ռուբլ, կես տարեկանը 6 ռուբլ:
Առանձին հոմարները 5 կոպեկով:

Թիֆլիսում գրվում են միմյանց խմբագրատան մէջ:

Վարչարարողացիք սխմում են արդարեւ
Tiflis. Redakcia «Melik»

Խմբագրատունը ըստ է առաւօտեան 10-2 ժամ
(Բացի կիրակի և տոն օրերէն):
Յայտարարում ընդունվում է ամեն ժամով:
Յայտարարութիւնները համար գնարում են
իրարմէյսը ըստ ին 2 կոպեկ:

ԲՈՂԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Հայի անցեալ փառքը. — ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ, Նամակ Երևանից: Նամակ Ղուբայից: Նամակ Խաղաղից: Ներքին լուրեր: — ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ, Միացեալ ընկերութիւնը հայոց: Թիֆլիս: Արտաքին լուրեր: — ԽԱՌՆ ԼՈՒՐԵՐ: — ՀԵՌԱԿԻՆԵՐ: — ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ:

ՀԱՅԻ ԱՆՑԵԱԼ ՓԱՌՔԸ

Հին հայոց աւերակները կամ նրանց նը-
կարները տեսնելով, մենք առհասարակ հի-
անում ենք նրանց փառահանգիծեան վրա,
զմայրվում ենք շինութիւնների անմահ ծա-
տարագետութեան վրա: Տեսնելով հայոց
անցեալ կեանքից այդ փառաւոր մնացորդ-
ները, այդ եկեղեցիներն ու մատուռները,
այդ իշխանական պալատները, մենք ակա-
մայ բացականչում ենք՝ «որքան բարձր աս-
տիճանի վրա պէտք է կանգնած լինէր
հայոց ազգի անցեալ քաղաքակրթութիւնը»:
Բայց համեմատելով այդ երևոյթները
հայի այժմեան կեանքի համանման երևոյթ-
ների հետ, մենք հակած ենք լինում կար-
ծել որ այդ անցեալ փառքը մի խաբուսիկ
երազ էր:

Գուցէ մինչդեռ գեղեցիկ եկեղեցիներ
էին կառուցվում,— ոչ մի դպրոց չէր կար
հայերի մէջ, փառաւոր իշխանական պա-
լատների կողքին, կարելի է, ամբոխի խորին
աղքատութիւն էր տիրում...

Եւ ճշմարիտ նշանանման երևոյթներ մենք
նկատում ենք և մեր ժամանակակից կեան-
քի մէջ: Գտնեցէ մի որ և է հայաբնակ
քաղաք կամ գիւղ,— և կը տեսնէք որ նոյն
տեղ, որտեղ ձեր չորս կողմը խորին աղքա-
տութիւն է խորին տգիտութիւն է տիրում,
ձեր առջև կանգնած է մի հոյակապ, սրբա-
տաշ քարերից շինած մի եկեղեցի, որ հա-
մար հարկերն է նստել հասարակու-
թեանը,— իսկ դպրոց կամ ամենին չը կայ,
կամ եթէ կայ, մի ողորմելի խրճիթ է, որ
աւելի մի արտոյի նման է, քան թէ դըպ-
րոցի: Մի փառաւոր եկեղեցի էք տեսնում
ձեր առջև. երբեք հարկւր քայլ հեռաւոր-
ութեամբ մի այլ եկեղեցի է կառուցված,
իսկ այդ երկու եկեղեցիներն մէջ տեղ դար-
ձեալ մի նոր եկեղեցի է կառուցվում... Իսկ
դպրոցը մի խոնաւ գետնափոր է, որի շե-
նութեան և պահպանութեան համար նոյն
հասարակութիւնը որ հարկւր հազարներ է
ծախսում փառաւոր եկեղեցիներ շինելու
վրա, ընդամենը միանուագ 50 ռուբլ է
տուել... Եթէ այժմեան երևոյթների վրա
դատելով, դատենք և մեր անցեալ կեանքի
փառքի մասին, այդ անցեալը մի շատ զար-
գացած, քաղաքակրթ անցեալ չի երևայ
մեզ...

Ինչքան դարեր գոյութիւն ունի հայոց
ազգը. եթէ այդ բոլոր դարերի ընթացքում
հայոց եկեղեցիների բնմիջ իւրաքանչիւր
կիրակի լուրի հասկանալի բարբառով ժա-
մասացութիւնը, քարոզի բարոյականացող,
մտաւորապէս զարգացնող կենդանի խօսքը,
— այսօր հայոց ազգը աշխարհին ամենա-
զարգացած, ամենաքաղաքակրթ ազգերից
մինը կը լինէր: Բայց կենդանի քարոզի,

Աստուծու խօսքն աւանդելու համար միթէ
հարկաւոր էին այդ ահագին ծախսերը,
այդ քարաշէն, մեծածախ շինութիւնները:
Աւետարանի անմահ խօսքը կարելի է ա-
ւանդել և մի անշուք, համեստ, յարմար
դահլիճում:

Եթէ հաշուենք այն ահագին գումար-
ները որ հայոց ազգը ծախել է դարերի
ընթացքում քարերի և աղիւնների վրա,—
այդ գումարները հաւասար կը լինեն մի-
լիօնների, որոնցով հայոց ազգի կրթութիւնը
կարելի էր հասցնել ամենաբարձր աստի-
ճանի և հաւասարացնել մեր քաղաքակր-
թութեան աստիճանը եւրոպական ամենա-
զարգացած ազգերի քաղաքակրթութեան
աստիճանի հետ:

Մեզ հաստատ աղբիւրներից պատմում
են հետեւեալը: Թիֆլիսցի հայաստանում,
Գիւմրի-Ջանէ գիւղում, որ առաջ մի մեծ
քաղաք է եղել, ժողովուրդը այն աստիճան
աղքատ է, որ իր հայրենիքում հնար չը
գտնելով ապրելու, անդադար գաղթում է
և արդէն Գումրի-Ջանէի մէջ շատ քիչ հայ
ընտանիքներ են մնացել, որոնք նոյնպէս ա-
մեն բոլոր պատրաստ են գաղթելու: Բայց,
այնու ամենայնիւ նոյն Գիւմրի-Ջանէի հայ
հասարակութիւնը կառուցել է և աւարտել է
մի հոյակապ, սրբատաշ քարերից շինած մի
եկեղեցի, որ արժան էր գտնվել եւրո-
պական մի մայրաքաղաքի մէջ և որի վրա
այնպիսի ահագին գումարներ են ծախսել
տեղի հայերը, որ այդ գումարներով կարե-
լի էր ոչ թէ միայն դպրոցներ հիմնել գիւղի
մէջ, բայց և տնտեսական, երկրագործական
կամ արուեստագործական կողմից ծաղկեց-
նել գիւղը, և հարկ չէր լինի գիւղի հայե-
րին գաղթել իրանց հայրենիքից: Իսկ աղո-
թելու համար նրանք շատ լաւ կարող էին
կառուցանել մի մաքուր, ընդարձակ և
փոքր ծախս պահանջող սրահ:

Եթէ հայի տնտեսական ամբողջ կարո-
ղութիւն կրնայ փառաւոր շինութիւնները
ձգտելն լինել կրթարարների, այդ գեռ հաս-
կանալի կը լինէր: Բայց հայը շինում է մի
եկեղեցի, ինքն աղքատանում է տաճար
շինելուց յետոյ, ստիպված է գաղթել իր
տեղից և եթէ չը գաղթէր էլ,— այդ շի-
նութեան բնմիջ երբեք չէ լսվում կենդանի,
զարգացող խօսք, այլ միայն կատարվում
են արարողութիւններ: Եկեղեցիներ էք կա-
ռուցանում, բայց չէք պատրաստում մի
խելացի և հիմնաւոր կազմակերպութեամբ
հոգեւորականներ, որոնք պէտք է քարո-
զէին այդ եկեղեցիներն բնմիջ և քաղաքա-
կրթիչ ազգեցութիւն ունենային տգէտ
ամբոխի վրա:

Գ. Ա.

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՆԱՄԱԿ ԵՐԵՒԱՆԻՑ

Մայիսի 24-ին

Անցեալ տարի Այվազեան Կարապետ վարդա-
պետը վ. Կաթողիկոսի հրամանով գնաց Ալաշ-
կերտ և տարած իր հետ 900 ռուբլի սովաւաւ-

ներին բաժանելու: Այժմ հաստատ աղբիւրներից
լսում ենք, որ: 1) Գ. հայրը 900 ռուբլ Լիւն չէ
բաժանել: 2) մի փառաւոր յայտարարութիւն է
տուել տեղացի իշխանութեան (փաշային) որպէս
թէ բոլորովին սով չը կայ Ալաշկերտում: Փաշան
այս յայտարարութիւնը ուղարկել է Բ. Գումր
սա էլ ներկայացրել է նոյնը Ներքին պատկար-
զին, իբրեւ պաշտօնական հերքում սովից մաս-
նաժողովի յայտարարութիւնների: Եթէ այս լու-
րը հաստատվի, այն ժամանակ ինչ անուն պէտք
է տալ Կ. վարդապետին: Հրաւիրում ենք Կ.
վարդապետ Այվազեանին յայտնել հրապարակաւ
այս լրի մասին իր ասելով:

Հաստատ տեղեկութիւն ունեմ, որ վ. Կա-
թողիկոսը ուղարկել է Գրիգոր Կաթողիկոս
Աղափրեանցին, որ եկող սեպտեմբերից ձեռնա-
րանում փիլիսոփայութիւն, Փրանսէլէն և գեր-
մաներէն լեզուներն իրանց դրականութիւնով ա-
ւանդելու համար ուսուցչապետներ հրաւիրէ: Ս.
Աղափրեանցը կարող է այդ նպատակի համար
արտասահման էլ գնալ, եթէ Բուսաստանում չը
գտնվին ուղած մարդիկ: Հոգով համակրում
ենք վ. Կաթողիկոսի կաթողիկոսի առ ձեռնարան ու-
նեցած դիտարկութիւններին և դործունէութեա-
նը. բայց ցաւում ենք յոյժ, որ ձեռնարանը մոռց-
նել է տուել վ. Կ. Հօրը թէ կան և ազգային տար-
րական, վիճակային և թեմական դպրոցներ, որք
նոյնպէս կարող են նորին սրբութեան լուրջ մը-
տախտնութեան և կարեկցութեանը:

Յունիսի մէկից սկսվում են Ե. թեմական
դպրոցների հարցաքննութիւնները. կարծիք չը
կայ, որ ժողովուրդը չի մասնակցի քննութիւն
ներին և այս տարի, թէն հրատարակված է տե-
ղական թերթի մէջ. բայց ցանկալի էր, որ հոգա-
բարձութիւնը ժողովրդի մեծերին հրաւիրէր ա-
ռանձին կերպով և յայտնէր թեմ. դպրոցների
նիւթական վիճակի ողբալի դրութիւնը: Գարա-
նացը վառագի մէջ է. եթէ պ. պ. երեցփոխանները
չը բարեհաճեն վճարել եկեղեցական գումարնե-
րից յատկացնել հասոյթը, դպրոցները կարող է
փակել իր I. II և III դասարանները և դառնալ
լոկ ծխական դպրոց:

Ժողովուրդը պէտք է դիմել վ. Կաթողիկոսին
և խնդրէ որ նախ Կատարել տայ իր և ս. Սի-
նոդի հրամանները երեցփոխաններին և գաւա-
ռական գործակալներին, որոնք համարձակվում
են չը լսել իշխալ հրամանների պատուէրները:
Ներանայ նախագիտ արդիւնքներից մի որ և է
մասը յատկացնել թեմական դպրոցներին, որի
մէջ ամբողջ թեմից մօտ 220 աշակերտներ են
կրթվում: Հոգաբարձութիւնը յոյսը դնելով ս.
Սինոդից հրամայված արդիւնքների ստանալու
վրա՝ իր նախորդների օրով ժողոված 11,000
լուբլից ծախել է արեւ. որը պէտք է անմատ-
չելի դրամագլուխ համարվէր և այդ գումարից
եկող սեպտեմբերին դպրոցներն մնացած կը լինի
3—4000 ռուբլ միայն: Չը գիտեմ այս հանդաման-
քում ով է աւելի մեղաւոր երեցփոխանները, որ ի-
րանց օգուտն են մտածում միայն, թէ ժողովուր-
դը՝ որ զգուշիւ անտարբերութիւն է ցոյց տալիս
դէպի եկեղեցին և դպրոցը. Հոգաբարձութիւնը,
որ դպրոցի ուսումնական մասը բարձրացնելու
և սրմանով ժողովրդի համակրութիւնը դէպի
դպրոցի գրաւելու խորհրդով, վառնեց դպրո-
ցի դրամագլուխը, գուցէ անվերապառնա-
լի կերպով. թէ վերջապէս մեղաւորում հ. իշ-
խանութիւնը, որ կարծես ձեռն համար է հրա-
մաններ արձակում և էլ չէ հետաքրքրել լինում
թէ ով կատարեց իր հրամանը, և ով արհամար-
հեց: Թէ այսպէս և թէ այնպէս, մեր թեմական
դպրոցների ապագան վտանգալի է, եթէ եղած
դրութիւնը չը փոփոխվի:

Նորայր

ՆԱՄԱԿ ՂՈՒԲԱՅԻՑ

Մայիսի 26-ին

Մովսէս Խորենացու վկայութեամբ հայերը
գեռ քրիստոնէութիւնը ընդունելուց մի դար ու-
կէս առաջ բնակվում էին դաշտավայրում, որը
հիմայ մոտում է Ղուբայի գաւառի գծի մէջ:
Բայց մեր գաւառը չէ ներկայացնում նշանաւոր
հետքեր, որոնք հաստատէին, որ հայ ժողովուրդը
վաղեմի դարերում բնակվում էին գոյած լինէր այս-
տեղ: Չունենք մենք այն սքանչելի տաճարները,
արձանները և պալատները, որոնք, օրինակի հա-
մար, Նրեանեան նահանգում, վկայում են թէ
հայերը ինչ նշանաւոր կուլտուրական աստիճանի
վրա էին կանգնած: Միակ նշանները, որոնցով
կարելի է հաստատել, թէ հայերը մեր գաւառում
մի ոչ հեռու ժամանակ բազմաթիւ էին, քան
թէ հիմայ՝ այս գերեզմաններն են և մի քանի
գիւղերի ու տեղերի հայոց անունները, ուր հի-
մայ բնակվում են թուրքերը: Այս գերեզմանները
ցրված են գաւառի դաշտավայրի վրա, անտառ-
ների մէջ և դառնալով են քաղաքից 25, 30
վերտ հեռաւորութեամբ: Գերեզմանաբարերի
արձանագրութիւնները չափազանց կրճատած են.
մի քանիսն են արձանագրութիւն չունեն, բայց
միայն փորագրված են նրանց վրա արեգակի,
աղեղնի, նետի, վահանի, կռիվների և կա՛կա-
րաքի ձևերը և առհասարակ այն աւարկաների
պատկերը, որոնք ծառայում էին նրանց յայտնի
արուեստների պարագանքներին: Վերջապէս
կան և այնպիսի քարեր, որոնց վրա բնակւն ու-
նիչն դուրս բերված չէ՝ ոչ խօսքեր, ոչ որ և ինչ
աւարկաների պատկերներ:

Սակայն կարելի է տեսլ, որ այս գերեզմանա-
քարերի ու գերեզմանների հետազոտութիւնը կա-
րող է փոքր ինչ լոյս ձգել այն հարցի վճռելու
վրա, թէ հայերը որ դարից են սկսել գաղթել
Ղուբայի գաւառը:

Ներկայումս հայերը բնակվում են միայն եր-
կու գիւղում՝ Նոր-Խաչմաղում և Կիլվարում. ա-
ռաջինում—թուրքերի հետ խառն՝ 30 տուն հայ,
10 տուն թուրք, իսկ երկրորդում—միայն հայեր
և թուրք հարկւր չորս տուն են: Բացի սրանցից
մօտ հարկւր տուն հայ բնակվում են Ղուբայ
քաղաքի մէջ և 20 տուն—Ղուսարում, ուր դը-
տանվում է շիրվանեան զինուորական գունդի
բնակարանը. բայց ոչ քաղաքի և ոչ Ղուսարի
բնակիչները բուն զուգակցներն չեն, այլ եկած
են Կովկասի միւս գաւառներից, 1830 թւից ըս-
կած: Գեռ և ոչ հեռու ժամանակ հայերը մեր
գաւառում բազմաթիւ էին, քան թէ հիմայ.
1792 թւին, երբ կոմս Ջուրովի զօրքերը պաշա-
րում էին Ղուբայի դաշտավայրը, մեր գաւառը
ունէր մի քանի գիւղեր հայ բնակիչներով: Հին
խաչմաղ, Ղարաշալի, Բարալի, Փարաբ, (ներկա-
յում այս գիւղերում թուրքեր են բնակվում),
բայց օրովհետեւ այս գիւղերի հայերը բարեկա-
մաբար և ուրախութեամբ ընդունեցին ռուսնե-
րին, միայն նպատակով իրանց դարձեալ մնալ
կարող ռուսները գնալուց յետոյ դարձեալ մնալ
թուրքերի մէջ. այս պատճառով ստիպված էին
Ջուրովի զօրքերի հետ գաղթել Բուսաստան,
զինուորապէս Ղլար և Ատարախան. գեռ հիմայ
էլ կայ Ղլարի գաւառում մեր զուրքերը գաղ-
թականների մի գիւղ՝ Ղարաշալի անունով:

Այսպիսով բազմաթիւ հայ գիւղերից այս րո-
պէս մենք ունենք հայ բնակիչներով միայն
երկու գիւղ՝ Նոր-Խաչմաղ և Կիլվար: Սակայն,
եթէ հայերն որանց վրա այն տեսակետից, որ
մի ժողովրդի ազգութիւնը որոշելու համար
հարկաւոր է իմանալ, թէ այդ ժողովուրդը ինչ
լեզուով է խօսում, կամ ինչ սովորութիւններ
ունի, այն ժամանակ հայի թէ մեր խաչմաղ-
ցիներին ու կիլվարցիներին կարելի կը լինէր
ճանաչել հայ ազգութեան պատկանող անդաւ-
ներ: Կորցնելով իրանց մայրենի լեզուն, աւան-
դութիւնները, նրանք միայն նրանով են դաճա-

զանազան իրանց գրադի թուրքերից, որ ամբողջ տարի մի կամ շատ շատ երկու անգամ են լինում Աստուծու տանը և բնառ ոչ մի հասկացողութիւն չունեն իրանց կրօնի վերաբերութեամբ: Ազգային յատկութիւնների բացակայութիւնը կիրվարցիներում համեմատաբար առաւել են նշմարուում, քան թէ խաչմաղցիներում, որովհետեւ Արեւմտի գիւղի բնակիչները, բնակվելով զաւառի լեռնային մասում և հեռու լինելով քաղաքից, սակաւ են ունենում միջոցներ յարաբերութիւն ունենալ քաղաքացիների հետ: Շատերը սրանցից սափում են իրանց գլուխները և չեն կատարում եկեղեցական ծէսերը. անձամբ ինձ յայտնի է, որ երկու կիրվարցիներ պահում են երկու երկու կին: Ինչ անեն կիրվարցիները, որ նրանք օրինակ են վեր առնում իրանց գիւղի լոթի քահանայից: Այս վերջինը ոչ ժամանացութիւն է անում, ոչ պատ է պահում, ոչ հայերէն է խօսում (կիրվարցիները թաթարերէն են խօսում, այս լեզուն արձատեալ պարսկերէնին նման է) և յայտնապէս երկու կին է պահում: Ուրեմն ինչ պահանջել խեղճ ողորմելի գիւղականից, եթէ Աստուծու տան ներկայացուցիչը և քրիստոնէութեան բարոյականութեան քարոզողը այսպիսի տգէտ և անբարոյական մարդ է:

Թէպէտ այս գիւղերում կան դպրոցներ, բայց շատ քիչ և ողորմելի դրութեան մէջ են գտնուում, հոգաբարձուների անտարբերութեան և անազնութեան շնորհով: Արեւելի դպրոցը ըստ անուն է բարոյի Մարգարեական ընկերութիւնից 350 ռուբլ և 50 ռուբլուց աւելի ուղարկում են զանազան քաղաքներից. այս 400 ռուբլեան եկամուտից դպրոցի համար ծախսվում է գուցէ ոչ աւելի քան 200 ռ., 180 ռ. վարձակալութիւն և 20 ռ. մանր ծախս: Իսկ մեր նացեալ 200 ռ. ձեր է գնում, ոչ ոք ոչինչ չէ խմանում, բայց պ. հոգաբարձուից: Խաչմաղցի երկու դպրոցը Բագրի Մարգ. ընկ. ստանում է 100 ռուբլի, բայց այս ընկ. օժանդակութիւնից ունի ևս 75 ռուբլ իր հազար ռուբլ մայր գուժարի տոկոսը, որը ընծայել է շուշեցի պ. Ալեք. սանովը: Խաչմաղցի դպրոցի վարձակալեալ մի ծով քահանայ է: Այս դպրոցը 9 ամիս փակ էր: Յիմայ դպրոցը բաց է ու վարձակալութիւն մի և նոյն ծով քահանայ է անում. Ինչ և ինչէ, այս դպրոցը առաւել ևս լաւ և ծաղկեալ դրութեան մէջ կը լինէր, եթէ միայն պ. Պետրոս բէկ Ղազարովը, գիւղի իշխանը ցանկանար այդ: Ինչպէս տեսնում է ընթերցողը այս դպրոցները թէպէտ ապահովված են նիւթական կողմից, իսկ կրթողական վերաբերութեամբ շատ թույլ են: Ահա քանի տարի է որ այս գիւղերում կան դպրոցներ, բայց մինչև այժմ այս գիւղերի ոչ միում գուժ չէ քանի մի երեխայ, որ գիտենար հայերէն խօսել: Եւ զարմանալու ոչինչ չը կայ: Բայց նրանից, որ այս դպրոցները գտնվում են այսպիսի ողորմելի դրութեան մէջ, ներանք ոչ մի ժամանակ չեն կարող բերել նական օգուտ: Նրբէք. բարեգործողների աշխատութիւնը չի բերի լաւ պտուղ, մինչևեւ օրիորդների կրթութիւնը բարձի թողի կառնով: հոգաբարձուներից: Նոր սերունդի պատրաստութիւնը այնպիսի գիւղերում, ուր չեն խօսում մայրենի լեզուով, բնականապէս պէտք է գնայ դուրսնաւապէս երկու սեւերի վերաբերութեամբ, ուսուցանելով ինչպէս աղաներին, նոյնպէս էլ օրիորդներին: Հակառակ դիպուածքում, մանուկը, որը զբաղւում շատ լաւ էր խօսում ու կարողում հայերէն, դպրոցից դուրս գալուց յետոյ, իսկոյն մոռանում է, այն ինչ որ սովորել էր այնտեղ. պատճառը մայրը, քոյրը նրա հետ թաթարերէն կամ թուրքերէն են խօսում: Ուրեմն ակներև է, որ առանց օրիորդների կրթութեան, առանց մայրերի պատրաստելը այս առաջին և ամենագլխաւոր մանկավարժների տղայոց դպրոցը չէ կարող պատրաստել մի հիմք լուսաւորութիւնը ժողովրդի մէջ հաստատուն մուծանելու համար:

ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐԻՆ

Թիֆլիս, 29 մայիսի

Հայոց խնդրոյն լուծման մասնաւորապէս ներպատկուր յատկացած և Եւրոպա հրատարակելի մի լրագրոյ հաստատութիւն, անտարակոյս, շատ օգտաւէտ հետեանք կը խոստանայ: Ձեր այսօրվան համարին մէջ այդ մասին հրատարակած տողերն ըստ ինձ, ոչ մի հայ չէ կարող առանց համակրութեան կարդալ:

Այսպիսի աղերս մտքեր յղացող անձինք, անշուշտ, իրենց վարձատրութիւնը բուն իսկ գործին յաջողութենէն կը սպասեն, բայց և այնպէս իբրև հայ, չեն կարող չը յայտնել ձեզ իմ խորին շնորհակալութիւնքս և խնդրել որ բարեհաճէք նկատել զիս, այժմէն բաժանորդ, եթէ երբեմն ձեր ազգօգուտ առաջարկութիւնը իրականութիւնը գտնայ:

Զ. Տէմիրեան

ՆԵՐՖԻՆ ԼՈՒՐԵՐ

Հաստատ աղբիւրներից լսում ենք, որ Ահա-փառ Կաթողիկոսը բարեհաճել է հաւանութիւն տալ Թիֆլիսի ընդհանուր ուսուցչական ժողովի կայանալուն, պարտաւորեցնելով քաղաքային Իւրաքանչիւր եկեղեցւոյն վերոյիշեալ ժողովին անհրաժեշտ ծախսերի համար վճարել 20 ռուբլ: Իսկ գիւղական ամեն մի եկեղեցւոյն 5 ռուբլ:

Մի երիտասարդ խնդրում է մեզ յայտնել, որ պատրաստում է երեսնանիւս դիւնուորական զբաւրոյցի և բնական գիմնադիպի բոլոր դասաւորւնները մտնելու: Հասցէն թողնել «Մշակի» խմբագրատան մէջ:

Շնորհակալութեամբ ստացանք Շուշու մէջ տպված, պ. Տ. Նազարեանցից թարգմանած և հրատարակված գրքովը «Պոզնանի ուսուցչի օրագրից» հեղինակութիւն Լիւթովի: Այդ պատճառով մենք առաջ կարդայինք «Вестник Европы» ամսագրի մէջ և խորհուրդ ենք տալիս մեր ընթերցողներին կարգել այդ վերին աստիճանի հետաքրքիր և օգտաւէտ գրքովը, որ այժմ հայերէն թարգմանութեամբ ընծայում է հայոց հասարակութեանը պ. Տ. Նազարեանց: Թարգմանիչը իրաւունք ունի նուիրել իր աշխատանքը հայ ծնողներին և դաստիարակներին: Թող կարգան և հասկանան թէ ինչպէս դպրոցը կարող է մեռցնել երեխային: Գրքոյի գինը 20 կոպէկ է:

«Кавказский Кургерь» լրագրում կարդում ենք հետեւեալը: «Հայրերում են, ու պէտք հաստատուր, որ հայոց կաթողիկոս Գեորգ IV շատ վստահաւոր և անդուստի կերպով հիւանդ է: Խորհուրդ ենք տալիս Թիֆլիսի հայոց հասարակութեան ներկայացուցիչներին հաւատարմաւ այդ արեւելի լուրի ճշգրտութեան մասին, որպէս զի վաղորդ ուղարկվի Էջմիածին մի պատգամաւորութիւն ազգային սեփականութիւնը ամեն պատահարներից ապահովելու համար: Հայոց կաթողիկոսանիւտ վանքի մէջ հաշակաւոր Մանկուտոն ներկայութիւնը այդ նպատակի համար բաւական չէ: Ուստ յարգելի լրագրի հաղորդած լուրին մենք էլ աւելացնում ենք մեր կողմից Թիֆլիսի հասարակութեանը ուղղված մի հրաւեր, ինչպէս Մատթէոս կաթողիկոսի ժամանակ է եղել, շուտով ուղարկել մի պատգամաւորութիւն Էջմիածին ազգային գանձը որ և է վստայից ապահովելու համար:

Մայիսի 29-ին թիւրքաց Հայաստանից վերադարձած պ. Թորմախանը կարգաց Արծրունու թատրոնում իր դասաւորութիւնը «Թիւրքաց Հայաստանի մասին»: Գուցէ կասեն որ Թորմախանի դասաւորութիւնը շատ մեծ սխառեմ չունէր, բայց անտարակոյս նա շատ հարուստ էր նոր և հետաքրքիր տեղեկութիւններով թիւրքաց Հայաստանի մասին: Եւ այդ պատճառով շատ ցաւալի է որ ժողովուրդը քիչ էր հաւաքվել նրան լսելու համար: Մեր ինտելիգենցիան, որին աւելորդ չէր լինի քիչ թէ շատ ուսումնասիրել այն երկիրը, որին նա բարոյապէս օգնել է ուղղում,—բացառկայ էր: Լսողների մեծ մասը հասարակութեան միջին և մասամբ ստորին դասին էին պատկանում: Պ. Թորմախանը բաժանեց իր հրապարակախօսութիւնը երկու մասի վրա, որոնցից առաջին փաստական էր, իսկ երկրորդը բարեխաղ էր ընդհանուր դատողութիւններից: ձեռք թաշտանների վրա հիմնվելով, պարծնը ցոյց տուեց մեզ որ Ամին նահանգում հայերը մեծամասնութիւն են կազմում, որ այդ տարրի ձեռքում է երկրի առաւելումը, արւեստները և առհասարակ տնտեսական կեանքը: Գատախօսը ցոյց տուեց մեզ նմանների մի հարուստ ժողովածու Հայաստանի գործաւանդութիւնների մասին: Թորմախանը այն միտքը յայտնեց որ Հայ

յոց ազգութեան նեցուկը ոչ կրօնն է, ոչ էլ հայոց ինտելիգենցիան, այլ հայ գիւղական դասակարգն է, որ չը նայելով բոլոր առաւելութեան, կապված է մնացել հայոց հողին, հաւատարիմ է մնացել հայրենիքին, այն ինչ ամբողջ արիւստկրատիան գաղթել է Հայաստանից և յետոյ անհետացել, ջնջվել է: Գատախօսը այն համոզմունքի է որ շատ հեշտ կը լինէր կապ հաստատել հայերի, քիւրդերի և ասորիների մէջ:

Կենդանիների հովանաւորութեան Թիֆլիսի ընկերութեան տարեկան ժողովը, որ նշանակված էր մայիսի 31-ին, նախագահի և փոխնախագահի Թիֆլիսից հեռանալու պատճառով յետաձգվում է մինչև 7 յունիսի, 12¹/₂, իսկ վարչութեան ժողովը լինելու է յունիսի 5-ին, 7 ժամին երեկոյան:

ՆԵՐՖԻՆ ԼՈՒՐԵՐ մեզ գրում են: «Ձեր նայելով որ եղանակը չափազանց հով է անցնում, այնուամենայնիւ երեսնանիւս պատրաստվում են Գարաշիլաղ գնալու: Այն օրից երբ սովորութիւն է դարձած երեսնի դասաւորւնները և վարչութեան հիմնարկութիւնները փոխադրել ամառանոց, մինչև այսօր, պաշտօնական տեղեկութեանց նայելով, մասաւորապէս 200,000 ռուբլ փող է ծախսվել Գարաշիլաղի վրա: Եթէ այդ գումարը ծախսվել նոյն իսկ երեսնի այլ և այլ բարեկարգութեանց վրա, այժմ երեսնը մի եւրօպական քաղաքի կը նմանէր: Բայց ով է մըտածում այդ հաշիւների վրա:»

Երեսնից մեզ գրում են: «Մեր նահանգապետ պ. Շալիկով գնաց Թիֆլիս: Ոմանք ասում են որ երեսնի նահանգի կառավարական խնդրի վրձնելուն մասնակցելու համար է գնացել, իսկ ոմանք պնդում են, որ այլ ևս չի վերադառնայ երեսնի:»

Կեզ հաղորդում են երեսնից որ մայիսի 24-ին Գայիանեան դպրոցի դահլիճում վիճակաւոր էր յօգուտ դպրոցի: Մեծ բազմութիւն կար: Որքան արդիւնք դրացաւ վիճակաւորից,—թղթի թակիցը չը գիտէ: Նոյն օրը երեկոյան թատրոնական ներկայացումն կար նոյն դահլիճում: Թաղում էին «Թուղթ խաղաղողի կեանքը»: Թատրոնը դատարկ էր, և երեսնից այդ ժամանակ իրանց անկում և կլուրում նստած թուղթ էին խաղում: Պ. Ա. Մեխանց կարգաց մի բանաստեղծութիւն:

ՂՈՒՐԵՐ մեզ գրում են, որ մայիսի 12-ին այդ քաղաքի կլուրը դահլիճում թատրոնական ներկայացումն տուեց պ. Օսիպովի ռուս թատրոնական խումբը: Թաղացին 1) Картины съ натуры, сцены изъ военной жизни, 2) Вспышка у домашнего очага, 3) Хочу быть актером. Ներկայացումը լաւ անցաւ, բայց ժողովուրդը սակաւ էր: Մայիսի 13-ին խումբը ծանապարհօրէնց դէպի Ղուսաբ:

Գուրայից մեզ գրում են: «Մեր գաւառի անտառապետը և նրա օգնականը բարեխաղաքար են վարում իրանց պաշտօնները, բայց օրցկզգէին երբ հարստահարում են ժողովուրդը: Պ. անտառապետի ուղարկութիւնն ենք դարձնում իր այդ ծառայողների անիրաւութիւնների վրա:»

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՄԻՍՅԵԱԼ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆՔ ՀԱՅՈՑ

Ահաւասիկ ընկերութեան ընդհանուր ժողովոյ նախագահ Տ. Ա. Ալթուն Տիւրքի ճառին պատճենը:

Ներեցէք, Տեառք, որ ինձ համար խիստ քաղցր պարտաւորութիւն մը կատարեմ, ներկայելով Ձեզ իմ շնորհապարտ զգացումներս այն բարձր վստահութեան համար, որով հաճեցաք պատուել զիս ի վեր քան զարժանիս, յանձնելով ինձ Կենդանական ժողովոյ նախագահութեան պաշտօնը:

Տեառք, այդպիսի մի փափուկ պաշտօնի նկատմամբ իմ անձեռնահասութեան գիտակցութեամբս հանդերձ զայն ստանձնել,

մանաւաղ ներկայ պարագայից մէջ և իմ անձնական բազմադիմի զբաղմանցս միջոցին, արդարեւ յանդգնութիւն մ'էր, սակայն հնար էր վարանել ձեր միահամուռ քուէից և այնքան համակրանօք յայտնուած ձեր բարձր կամաց առջև: Վստահ եմ, Տեառք, որ ձեր ներողամտութեան ոգին և թանկագին աջակցութիւնը մեծապէս պիտի գիրացնեն ինձ, պաշտօնիս բնութեան իմ վերայ դրած պարտաւորութիւնը խղճի մոռօք կատարել:

Սոյն առթիւ Տեառք, ներեցէ՛ք նաեւ որ երկու խօսք ալ ընկերութեան վիճակին և ընթացից վրայ ընեմ:

Ամենամեծ խորհուրդները մեծ արժէք չունին, եթէ գաղափարաց սահմանէն ելնելով չեն իրականանար:

Այդ մեծ խորհուրդներէն մին էր անշուշտ ազգին մէջ կրթութիւն ծաւալելու խորհուրդը, որ շատ ազգասէր դուխներ գրադեցուցած և հոգեցուցած էր ի բազմաց հետէ, առանց մեծ արդիւնք մը արտադրելու: Հայ ժողովուրդ մը կար որ կը զգար թէ կրթութեան պէտք ունի, բայց կրթուելու միջոց չունէր, Հայեր կային որ պատրաստ էին օգնութեան ձեռն կարկառել, բայց չը կար մարմին մը որ միջնորդ կանգնէր ժողովուրդեան և իւր բարեկամաց մէջ: Այդ մեծ խորհուրդին, այդ բարձր միջնորդութեան պատշաճաւոր մարմին տալու փաւքը Հայ երիտասարդութեան վերապահայ էր: Երեք չորս տարի առաջ եռանդուն երիտասարդաց մի քանի խմբեր անշուշտ յաղորդ հաստատմանութեամբ և անդուշտանիւր այդ մեծ խորհուրդն երեք տարբեր մարմիններու միջոցաւ ներկայեցին աշխարհի, անոնց իւրաքանչիւրը ժամանակ մի առանձին տարեցաւ, գործեց և իւր արդեամբքը փայլեցաւ, սակայն յետոյ զգալով թէ միութեամբ աւելի զօրանալով կարող պիտի լինէին իրենց նուիրական նպատակն ըստ արժանոյն արդիւնաւորելու, այդ երեք մարմիններն յոժարակամ մի ձուլուեցան և ծագում տուին ներկայ Միացեալ ընկերութեան, որոյ համար չափազանցութիւն չեմ համարիր ըսել թէ ամեն Հայ սրտերու սիրոյ առարկայն է և ամբողջ հայութեան պարծանքը: Այս գործը ձերն է, Տեառք, և ընդհանուր համակրութեամբ ողջունեցաւ ոչ միայն Հայ հասարակութեանէն՝ այլ և օտարներէ: Թէ իւր այսօրուան վիճակը քանի՜ երկանց և ո՞րպիսի անձնութիւններից և զոհողութեանց արդիւնք է, յայտնի է: Այսօր երեք հազարէն աւելի Հայ մանկուք իւր հաստատած 27 դրպրոցներու մէջ կրթութիւն կը ստանան: սուղ միջոցի մէջ այսպիսի հսկայ արդիւնք մը, Տեառք, արդարեւ մեր հիացման արժանի է. և թէպէտ միւս կողմանէ ընկերութեան ունեցած նիւթական միջոցներուն հետ բաղաւորելով իւր բազմաձաւայ ձեռնարկութիւնները յանդգնութեան գործ մը համարել կարելի է, սակայն հարկ է խոստովանել թէ այդ յանդգնութիւնն ալ իւր փեմ կողմն ունի:

Գործի մը լաւ սկզբնաւորութիւնը՝ նորա յաջողութեան պայմաններէն մին է, բայց միակ պայմանը չէ: Եթէ գէշ սկսուած գործ մը յարատեւութիւն չունինայ, ոչ ոք մեծ ցաւ կը զգայ, բայց երբ լաւ սկսուած գործ մը ջանից և գաղափարաց միութեան պակասութենէն կը խանդարի և կը մեռնի, այնչափ աւելի ցաւ կը պատճառէ ամեն ազգասէր սրտերու, որչափ որ մեծ էին աշխարհի յոյսերը:

Տեառք երեսփոխանք, մեր ամենուս վրայ

պարտք մը կայ—այն է վառ պահել միշտ
մեր սրտերուն մէջ այն հուրը, որ ծնունդ
տուած է ընկերութեանս, և ամբարշտել
զաղափարաց այն միութիւնն՝ որ զլիսաւոր
պայմանն է այս մեծ և բեղմնաւոր գոր-
ծին յարատեւութեան: Մանաւանդ այսօր,
Տեառք, առաւել քան երբեք պէտք ունիմք
միութեան և համաձայն գործակցութեան
արդէն ձեր Գործադիր Մարմնոյն Պետը
պիտի բացատրէ ձեզ թէ ընկերութեանս
ներթափան վիճակն անբաւական է զժողո-
ղաբար իւր բազմութիւն հաստատութեանց
պահանջած միջոցներն ապահովելու և ա-
պագային համար ալ վտանգ իսկ կը սպառ-
նայ ընկերութեանս զոյութեանը, եթէ
այժմէն փութով դարման չը տարուի: Այս-
պիսի ծանր կացութեան մ'առջեւ, Տեառք,
նոր կորովի, նոր գործութեան պէտք ու-
նիմք, առանց երբեք վհատելու, միասիրտ,
միահոգի աշխատելու եմք ընկերութեանս
ներթափան վիճակը զարգացնելու և զայն
զոնէ իւր պիտոյից համապատասխան դիւ-
քի մէջ բարձրացնելու: Արդարեւ, Տեառք,
երկրին հանդամանքներն ինչպէս և ներ-
կայ պարագայներն յոյժ աննպաստ են այս
միջոցին. սակայն մեր առջեւ մեր հասու-
թից կարեւորագոյն մի աղբիւր կայ, որ
զրեթէ կոյս մնացած է. խօսքս բաժանոր-
դագրութեան համար է, և երբ կիմանամք
թէ ստորագրեալ բաժիններու թիւն հազիւ
4,000 է, զիւրին է ըմբռնել թէ ո՞րքան
բարձի թողի մնացած է հասոյթի այդ մեծ
և փրկարար աղբիւրը, ուստի և ժամ է որ
աբար հարկ եղած ոյժն ու մղումը տալով,
ընկերութեանս ապագան ապահովենք. ա-
սոր համար մէն մի ընկեր իւր կարողու-
թեան չափով պէտք է աշխատի այս բա-
ժանորդագրութեան գործն ընդհանրացնե-
լու, և այս բանին համար ոչ միայն ընկե-
րաց գիտելու ենք, այլ և ամեն կարող ազ-
գային անհատի, զի ընկերութեանս իր զօնն
հայոց ազգին իր զօնն են, տիեզերական են
և նոյն իսկ դարուս ոգոյն պահանջում են,
սիրելի է ինձ յուսով թէ ձեր անխնայ ջա-
նից մէջ լիովին պիտի յաջողիք: Այո՛,
Տեառք, հարկ չունիմ արդէն ազգասիրական
ոգով փառեալ ձեր սրտերուն յորդոր և քաջա-
լիւր կարողութեան. դուք ինքնին համոզուած էք
անշուշտ որ ձեր այս նուիրական առաքե-
լութեան մէջ սակաւ ուրեք անտարբեր սըր-
տերու պիտի հանդիպիք. ամեն հայ, որ
տակաւին անմասն և անհաղորդ մնացած է
ձեր ազգագուս ձեռնարկէն, իւր բաժինը
պիտի փութայ սիրով նուիրել ձեզ, երբ զի-
մէք իրեն. այս մասին իմ համոզումն այն-
չափ յառաջ կրթեայ, որ մինչև իսկ հա-
ւատ ունիմ թէ, ինչպէս մահճին մէջ տա-
ռապեալ ծերունին, այնպէս ալ որբներն
մէջ խայտացող մանկիկը իւր բաժինը չը
պիտի զրանան ձեզ, և անդին երբ մեծա-
տունն իւր ձոխ գանձէն առատ նուէրներ
պարգեւէ, տանի մեղացիկն ալ իւր լու-
մայն սիրով պիտի բերէ ձեզ: Այս ըսած-
ներուս միակ պայմանը, Տեառք, հաստա-
կաց փոխհոգութիւնն է և զայդ ազգերն ալ
մեր գործերէն կախումն ունի. շեռեարար,
Տեառք, դարձեալ կըսեմ, միասիրտ և միա-
հոգի գործեմք և հաստատապէս գիտանալ
թէ յայնժամ, բայց յայնժամ միայն Ազգն
ընդ մեզ է յաւէտ:

(Մատիս)

ԹԻԻՐԻՔԻԱ

“Times” լրագրին Կ. Պոլսից հեռագրում
են մայիսի 25-ից: Սուլթանը նորից վճռել
է հրապարակական դատաստանի ենթարկել
այն բոլոր անձանց, որոնք մեղադրվում են

սուլթան Աբդուլ-Ազիզի սպանման մէջ: Որ-
քան հրապարակապէս կատարվի դատա-
տանը, այնքան լաւ է թէ սուլթանի և թէ
արքայութեան գործի համար, որովհետեւ
մինչև այժմ չափերը պնդում են, որ սուլ-
թանի սպանութիւնը կատարելապէս ան-
հիմն և հնարված է, չը նայելով նորի-
փաշայի խոստովանութեանը: Այդպէս են
մտածում ոչ թէ մեղադրվածների կուսա-
կից մարդիկ, այլ մինչև անգամ գործին մօտ
ծանօթ անձինք: Սրանց կարծիքով սկզբնա-
կան քննութիւնը կատարված է ամենաան-
կանօն կերպով և մեղադրվածներին ստի-
պել են խոստովանել, նրանց տանջանքնե-
րի ենթարկելով: Մեղադրվածները հաստ-
ապէս բանտի մէջ չէին պահվում, այլ պա-
լատի մէջ, իսկ քննութիւնը կատարվում
էր գաղտնի, սուլթանի անմիջական մաս-
նակցութեամբ, որ այդ գործով չափազանց
հետաքրքրված է: Մեղադրվածներին մի քա-
նիսին հարցրել են սուլթանի ներկայու-
թեամբ և նորիւրումն Ֆահրի-բէյ նորից
այդ վիճակին է ենթարկվել: Մի քանի վը-
կաներ ցոյց են տուել, որ սպանութեան
ժամանակ Ֆահրի-բէյ հսկում էր սուլթա-
նի դռները մօտ: Նա թողից մարդասպան-
ներին մահել սուլթանի սենեակը և ինքն
էլ այնտեղ գնալով մահափոխեց սպանու-
թեանը: Վիճակից մէկը, որին այդ հան-
գումանքի մասին հարցրին սուլթանի ներ-
կայութեամբ, լուռ էր բոլոր ժամանակ և,
երբ նրան նկատեցին, թէ նրա լուռութիւնը
նրան մեղադրում է, վրան միայն իր ուսե-
լը բարձրացրեց: Քննութիւնը մեծ դժուա-
րութեան հանդիպեցաւ տեղական և օտար
բժիշկներին հարցնելու ժամանակ: Բժիշկ-
ները ասում են, որ սուլթանի մարմնի վրա
բռնութեան նշաններ չէին երևում, բացի
մկրատով կտրած երակը, մինչդեռ վրանե-
րից շատերը ասում են, թէ մայր Ալի-բէյ,
կամենալով շուտ սպանել սուլթանին, սրով
կամ դաշոյնով նրան վտանգաւոր վերք հասց-
րեց:

Կ. Պոլսից „Polit. Corresp.“ լրագրին
գրում են, որ Բ. Գուռը երբեք չէ կամե-
ցել ծանաչել Ալի-բէյի նուաճելը Ֆրան-
սիայի կողմից: Նա միշտ հրաժարվել է Ալ-
ի-բէյի մէջ թիւրքաց հիւպատոս նշանա-
կել: Թիւրքաց կառավարութեան կարծիքով
Ալի-բէյի թիւրքայի մի նահանգ է, որ մի-
այն ժամանակաւորապէս զրաւած է Ֆրան-
սիական զօրքերով: Կրտ համար Ֆրանսիան
վրէժխնդիր եղաւ, չը ծանաչելով սուլթա-
նի Ֆիրմանը Տունիսի վերաբերութեամբ:
Այդպիսով Բ. Գուռը իր յամառութեամբ
ինքը ստեղծեց այժման դժուարութիւն-
ները: Ինչ կը վերաբերի Տունիսի բէյին,
նա դեռ 1870 թուականին ուղարկեց Կ.
Պոլսի Խէյրէդին-փաշային, որ պէտք է բո-
ղոքէր սուլթանի ցանկացած գերիշխանու-
թեան դէմ Տունիսի վրա: Այսպէս էր գոր-
ծերի գրութիւնը, երբ սկսվեցաւ ուսու-
թիւրքական պատերազմը, որի ժամանակ
Տունիսի բէյ հրաժարվեցաւ սուլթանին
օգնական զօրքեր ուղարկել: Թէ Բ. Գուռը
և թէ Տունիսի բէյը այժմ հնձում են այն,
ինչ որ ցանկել են: Ֆրանսիան երբեք չի
հրաժարվի իր սկսած գործից: Նա վճռել
է գերիշխանութիւն ունենալ Տունիսի վրա
և երբեք այդ վճիռը չի փոխի, թէպէտ
առաջին ժամանակներում գերիշխի ա-
ն ու թիւն բաւը գործ չի զին: Տեսնելով,
որ Թիւրքիայի իշխանութիւնը առհասարակ
կատակածիլ է դառնում, թիւրքերը վճռե-
ցին պատերազմական նաւատորմ ուղարկել
Տունիս: Ֆրանսիական զեւպանը յայտնեց
Ասիւր-Փաշային, որ Ֆրանսիայից թըն-

դանօթներ կրտով կընդունեն թիւրքաց
նաւերին, եթէ նրանք կը համարձակվեն
երեւալ Տունիսի առաջ: Ասիւր-Փաշա լսեց
այդ յայտնութիւնը և ոչինչ չը պատասխա-
նեց: Յայտնի է միայն, որ սուլթանը եր-
բեք և ոչինչ բանով այդքան չէ բարկացել,
որքան Տիսօփ յայտնութեանց յետոյ: Այժմ
պատերազմական նաւատորմը Տիսփոյի
կողմից, որովհետեւ թիւրքերի և Ֆրան-
սիայիների կռիւը վտանգաւոր է Բ. Գրան
համար և բացի այդ պէտք է առժամա-
նակ գիւղըմառական ծանապարհով գործել
սուլթանի հեղինակութիւնը վերականգնե-
լու և նրա պահանջներին որ և է նշանա-
կութիւն տալու համար: Առ այժմ թիւր-
քաց ծովային վարչութիւնը հրաման է
տեսել մի նաւատորմ պատրաստել Միջեր-
կական ծովը ուղարկելու համար:

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

— Ընկերութեան թէհնանից հեռագ-
րում են, մայիսի 31-ին հեռագրել. «Այստեղ ե-
կան թիւրքերի և Ռուսաստանի զեւպաները,
որոնք շատ լաւ ընդունվեցան շահից: Թիւրքաց
զեւպանը նորին միջոցներն հաւատարմեց, որ
սուլթանը հրամայել է առաջն առնել չէյն Խ-
րազուլայի կողմից լինելի նոր յարձակումը:
Ներքին: Լուրեր են տարածվել, որ թիւրքերը Վա-
նայ լծի մօտ են հաւաքվում: Պարսկական զօր-
քերը, որոնք մայիսի վերջին թէհնանից դուրս
եկան, հասան Ռաքիա և կը բնակվեն Մերզաբի-
րեան բանակում: Այդտեղ գնալու է չուտով Սի-
նիս-Վալար-Ալէմ: Մուստաֆա էլ-Մեմուլէկ-ազա
միսիստների լուրերով նախագահ է նշանակ-
ված:

— Ընկերութեան թէհնանից հե-
ռագրում են, մայիսի 31-ից հեռագրել. «Բիթ-
հաղ-փաշան, ցուցումներ տալով իր մասնակցու-
թեան մասին Աբդուլ-Ազիզի սպանման գործի
մէջ, այս օրերս տեղափոխված է մի ուրիշ բը-
նակարան, որտեղ կեանքում են նրան սուլթա-
նի հաշվով: Նորին մեծութիւնը, բացի զրանից
մի մուշտակ ընծայեց նրան և առհասա-
րակ բարի աչքով է դէպի նա: Միթհաղ-փաշան
հեռագրով իր բնտանիքին խաչա տուեց Չմիւս-
նիսյում, որ ինքն բաւական է թէ բնակարա-
նով և թէ ուսման և որ շատ լաւ են վարվում
իր հետ:

— Վիեննայի «Polit. Corresp.» լրագրից յու-
նիսի 1-ից Կ. Պոլսի միջով լուր տուցաւ, որ
սուլթան Աբդուլ-Համիդ Մեքքա սրբարան քա-
ղաքում մեծ շնորհութիւն օնեցաւ: Սուլթան
Ալիսի Ի-ի թագաւորութեան ժամանակից, Մեք-
քայում թիւրքաց զօրակն չէր ծածանում: Այն-
տեղի զօրքերի հրամանատար Նէշիր-փաշային ա-
նդվից կմիր-չէրիֆ Աբդուլ-Մուսալիբին համա-
ձայնեցին, որ սրբանից յետոյ քաղաքային երեք
ամբոցների և հրապարակական շինութիւնների
վրա ուղարկ և տնի օրերին բարձրացած լինի
թիւրքաց զօրակն: Առաջին անգամ այդ գոր-
ծողութիւնը շատ նախաւոր կերպով կատար-
վեցաւ, ներկայութեամբ չէրիֆի, մարզպետի ըն-
տանիքի անդամների, ուլէմների, նշանաւոր ան-
ձերի և տեղային իշխանութիւնների: Նախ քան
զօրակի բարձրացնելը աղօթել կողողացվեցաւ
Աբդուլ-Համիդ խալիֆի բարեկամութեան հա-
մար: Արաբիայի գործերի դրութեան մասին այն
բազմաթիւ թղթակցութիւնները, որոնք տպվե-
ցան եւրոպական լրագրիներում, եմիր-չէրիֆ Աբ-
դուլ-Մուսալիբի անբաւականութիւնը զրգու-
ցին իմաստաւ համար, թէ ով է այդ թղթակ-
ցութիւնները գրել, նա հրամայեց բոլոր կասկա-
ծելի նամակները փոստայում բաց անել: Այդ-
պիսի միջոցով նա կարողացաւ մի քանի թղթա-
կցիներ անուններ իմանալ, որոնք յետոյ կանչ-
վեցան քննութեան ենթարկվելու համար:

— «Temps» լրագրից հաղորդում է, որ Բէժից
Տունիսում հեռագրի է տեսվել, որից յայտն-
վում է, որ «Télégraphe» լրագրի խմբագիր Սե-
զուլին իրաւարար յարձակվեցան հէյա քա-
ղաքի մօտ, և սկսեցին քարեր արձակել նրա
վրա: Նրա զանազ նշանեց պաշտպանվելու հա-
մար, առաջանքներ թշուառականի ձեռքից դա-
նակել իւրեցին և սպանեցին նրան մի քանի հա-
րուածներով: Մարդասպանները կալանաւորված
են:

ԽԱՌՆ ԼՈՒՐԵՐ

Այս օրերս երգուեաների դատարանը փարի-
զում քննում էր սրմնագիր Լակրուայի գոր-
ծը, որը երեք ամիս առաջ խածնով կորցեց իր
ընկեր Վոստանի քիթը: Գատարներին առաջ,
սեղանի վրա, դրած էր ապակեայ շէյ մէջ գեղ-
ձի կտորը, որտեւ իրական ապացոյց: Գատար-
ներն ներկայացաւ զնախօրը, ներկայ եղողները
անհամբերութեամբ սպասում էին տեսնել թը-
շուառ գնին և արդէն առաջուց սարսափեց դո-
ղում էին: Նրանց զարմանքին չափ չը կար, երբ

սեղանին մօտեցաւ մէկ առողջ և կարմրադեմ ե-
րիտասարդ և պատմեց իր հետ պատահած բռնա-
բարութիւնը: Հասարակութիւնը իր աչքերին չէր
հաւատում. միտավորի դէմքի մէջ տեղը բարձ-
րանում էր քիթ, իսկական քիթ: Լակրուան կա-
մենում էր զրկել իր թշուառն այդ անհրաժեշտ
զարգարանից, բայց բնութիւնը, որը երբեմն
մարդկերանից աւելի լաւ է, նրան նոր քիթ
ընծայեց, այնպէս որ այժմ Վոստան երկու քիթ
ուներ. մէկը գանգում է իր տեղում, իսկ միւսը
սպիրտի մէջ, դատարանի սեղանի վրա: Բայց
քննութեան մեծահոգութիւնը չէ փոքրացնում
մեղադրվածի յանցանքը. երգուեաները մէկ տար-
վայ բանտարկութեան դատապարտեցին նրան:
Վոստան հեռացաւ դատարանի դռնից, շատ
բաւական լինելով նրանով, որ ինքն գիտնական
Ֆենոմեն դարձաւ:

Պեշտի բարձրագոյն դատարանում եկող շաբ-
թին կը քննվեն 35 խնդիրներ ապահարկանի
մասին: Այդ խնդիրներից միայն տասը տղամարդ-
կանց տուածն է, իսկ մնացած բոլոր խնդրե-
ները կանանց են պատկանում:

Այս օրերս, հէյա Վատիկանի մօտ, բնակու-
թիւն կը հաստատեն նոր անձինք, որոնց հարե-
ւանութիւնը հազիւ թէ անործելի լինի կա-
թոլիկական եկեղեցու գլխին: Եզդպատի նախ-
կին խեղճը դիտաւորութիւն ունի իր հարեմով
Նէապոլից Հոմո տեղափոխվել: Նա թողնու-
թիւն էր խնդրում սուլթանից Չմիւսնիս բնակ-
վել, բայց մերժվեցաւ նրա խնդրքը: Այժմ նա
բանակցութիւններ սկսեց Հոմո այն պալատ-
ներից մէկը գնելու մասին, որը համարեա կպած
է Վատիկանին: Պէտք է կարծել, որ եզդպատի
նախկին խեղճի նոր պալատի կանաչ վարա-
գոյրների հոսեց թաղնված սև աչքերը խեղքից
կը հանեն Ս. Պետրոսի փոխանորդին շրջապա-
սող շատ արեղաններին:

«ՄՇԱԿԻ» ՀՆՈՒԱԳԻՐՆԵՐ

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԸՆԿԵՐՈՒԹԵՆԸ

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 29 մայիս: Խորհուրդ-
ները գիւղացիների հողերը յետ գնելու հա-
մար վճարքի փոքրացնելու մասին կըսիս-
վին յունիսի 20-ին: Այդ Խորհուրդներին
մասնակցելու համար մինչստր Խնդարիկ
Մօսկիայից հրաւիրել է Մօսկվայի նահան-
գական զեմստիի փարչութեան նախագահ
Նաւոմովին, նոյնպէս իշխան Շէլիբաւով և
Գիտրի Սամարին ձայնաւորներին:

ԿՍՆԻԱՆԱՐ, 28 մայիս: Էմիրի զօրքերը
կատարելապէս ջարդեցին Գերիշկի մօտ
Էյեբ-խանի կուսակիցների հրամանատա-
րութեան տակ եղած զօրքերին, որոնք
կազմված էին անկանոն հետեակ և հե-
ծկազօրքից: Կռիւր չորս ժամ էր շարու-
նակվում: Կորուստների քանակութիւնը դեռ
յայտնի չէ:

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 30 մայիս: «Голосъ»
լրագրի հաղորդութիւնը Սարատովի մէջ
կատարված անկարգութիւնների մասին
պաշտօնապէս հերքում է:

ԿՕՐԱ, 29 մայիս: Ժողովրդի և պոլի-
ցիայի մէջ փողոցային կռիւ պատահեցաւ,
որ տեւում էր մինչև զիշեր: Շատ վիրաւոր-
վածներ կան:

ԼԷՎԵՐՊՈՒԼ, 29 մայիս: Այստեղ յայտն-
վեցաւ, որ փորձ է եղել վառօդով ծայ-
թեցնել քաղաքային վարչութեան տունը:
Շինութեան մի մուտքը փակված է: Կալա-
նաւորված են երկու իրանցիներ:

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 29 մայիս: Պետական
բանկի 50% տոմսով առաջին շրջանի ար-
ժէ 96 ռ. 75 Կ., երկրորդ 94 ռ. 62 Կ.,
երրորդ 94 ռ. 50 Կ., չորրորդ 94 ռ. 62 Կ.,
ներքին 50% առաջին փոխառութեան տոմ-
սակը արժէ 225 ռ. 5 Կ., երկրորդ 218 ռ.
5 Կ., արեւելեան առաջին փոխառութեան
տոմսակը արժէ 93 ռ. 25 Կ., երկրորդ 92
ռ. 87 Կ., երրորդ 93 ռ. 5 Կ., ոսկի 8 ռ.
75 Կ.: Ռուսաց 1 ռուբլ Լոնդոնի վրա ար-
ժէ 24,53 պէնս, Ռուսաց 100 ռ. Համբուրգի
վրա արժէ 209 մարկ 75 պֆ., Բարսելի
վրա արժէ 258 ֆրանկ 75 պֆ.: Փարիզի
սայի տրամադրութիւնը հանդիստ է:

Խմբագիր—հրատարակող ԳԻՒԳՐ ԱՐՏԱՔԻՆ

